ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Երևան 2018

Հեռաուսուցման ձեռնարկի տերմինների բառարան. փախստականների իրավունք: - Եր., 2018. – 40 էջ:

Ագրեսիա – ագրեսիան միջազգային հանցագործության տեսակ է, որը կարող է իրականացվել ռազմական գործողությունների համատեքստում՝ պետության կամ պետականատիպ կառույցի բարձր ղեկավարության կողմից: Այն ներառում է այնպիսի արարքներ, որոնք իրենց բնույթով, լրջությամբ և ծավալով կոպիտ կերպով խախտում են ՄԱԿ-ի Կանոնադրությունը: Նման գործողությունների օրինակներ են՝ պետության զինված ուժերի կողմից այլ պետության տարածքի ռմբակոծումը, այդ տարածք ներխուժելը կամ դրա վրա հարձակվելը, դրա օկուպացիան կամ անեքսիան, այդ պետության զինված ուժերի վրա հարձակումը, այլ պետության դեմ ագրեսիայի համար սեփական տարածքը տրամադրելը, պետության կողմից կամ անունից այլ պետություն զինված խմբեր, անկանոն զորքեր կամ վարձկաններ ուղարկելը, որոնք կիրականացնեն վերը նշված արարքներից որևէ մեկը և այլն: Մանրամասների համար տե՛ս Միջազգային քրեական դատարանի 1998 թ. կանոնադրության 8.1 հոդվածը և ՄԱԿ-ի Գերագույն վեհաժողովի թիվ 3314 (XXIX) բանաձևն առ 14.12.1974 թ.:

Ազգերի առավել բարենպաստության մոտեցում – Միջազգային իրավունքում, հատկապես Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) շրջանակներում կիրառվող ինստիտուտ: Պարտավորվելով օտարերկրյա անձանց որևէ խմբի նկատմամբ կիրառել այս մոտեցումը՝ պետությունը պարտավորվում է ապահովել, որ այս կամ այն առավելությունը, արտոնությունը կամ բարենպաստությունը, որը տվյալ երկրում տրամադրվում է որևէ երկրի քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց, կտրամադրվի նաև օտարերկրյա անձանց խմբին:

Ահմադիյա – մահմեդական կրոնական շարժում է, որը հիմնադրվել է Բրիտանական Հնդկաստանում XIX դարի վերջում: Ահմադի մահմեդականները հավատում են, որ իսլամը վերջնական կրոնն է մարդկության համար: Այս կրոնական ուղղվածության կարևոր բնութագրիչներից է հոգեորսությունը:

Այլ տարածքների սահմաններ – չվերադարձելիության սկզբունքն արգելում է անձին վտարել կամ վերադարձնել ոչ միայն ծագման երկիր, այլև ցանկացած տարածք, ուր առկա են այս սկզբունքի կիրառման մյուս պայմանները: Այդ տարածքը նույնիսկ կարող է չունենալ պետության տարածքի կարգավիճակ: Ինչպես 1951 թ. Կոնվենցիայի, այնպես էլ Եվրոպական կոնվենցիայի շրջանակներում չվերադարձելիության սկզբունքը արգելում է անձի

վերադարձն այնպիսի երկրներ, որտեղ նա բավարար չափով պաշտպանված չի լինի վտանգավոր տարածք վտարումից կամ վերադարձից:

Անհատական դիմում – սեփական անձին Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ միգրացիայի հարցերով լիազոր մարմնին ուղղված գրավոր խնդրանք:

Անձնական տվյալ - ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը: Անձնական տվյալների օրինակ են՝ անձի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվ, պատկերը, կոնտակտային տվյալները, անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տեղեկությունները, անձի ռասայական, ազգային պատկանելությանը կամ էթնիկ ծագմանը, քաղաքական հայացքներին, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներին, արհեստակցական միությանն անդամակցությանը, առողջական վիճակին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները:

Ապաստան – լայն իմաստով՝ պետության կողմից իր քաղաքացի չհանդիսացող և իր ծագման երկրում հետապնդումների ենթարկվող անձին սեփական տարածքում տրամադրվող պաշտպանություն: 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածը սահմանել է յուրաքանչյուր անձի՝ հետապնդումից այլ երկրներում ապաստան փնտրելու և

այդ ապաստանից օգտվելու իրավունքը: Փախստականների միջազգային իրավունքի շրջանակներում ապաստան պետք է տրամադրվի փախստականի կարգավիճակ հայցող կամ ստացած յուրաքանչյուր անձի, իսկ որոշ դեպքերում՝ նաև նրանց ընտանիքի անդամներին:

Ապաստանի դադարեցում – ապաստանի դադարեցումը պետության կողմից ձեռնարկված ակտիվ գործողություն է, որի արդյունքում դադարեցվում է անձին տրամադրված ապաստանը: Այն կարող է տեղի ունենալ ինչպես փախստականի կարգավիճակի դադարեցման հետ մեկտեղ, այնպես էլ այդ կարգավիճակի պահպանմամբ:

Ապաստանի դիմում – Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ միգրացիայի հարցերով լիազոր մարմնին ուղղված գրավոր խնդրանք:

Ապաստանի իրավունք – Յուրաքանչյուր անձի՝ հետապնդումից այլ երկրներում ապաստան փնտրելու և այդ ապաստանից օգտվելու իրավունքն (ապաստանի իրավունք) է՝ սահմանված 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածով:

Ապաստանի խնդրանք – Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն գտնելու նպատակով բանավոր, գրավոր, ժեստերի լեզվով կամ հաղորդակցության որևէ այլ միջոցով առերես արված

ցանկացած հայտարարությամբ ապաստան ստանալու խնդրանք՝ ուղղված Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերին կամ միգրացիայի հարցերով լիազոր մարմնին կամ ՀՀ ոստիկանությանը կամ ազատազրկման վայրի վարչակազմին:

Ապաստան հայցող – անձ, որը հետապնդումից կամ լուրջ վտանգից պաշտպանություն է փնտրում իր երկիրը չհանդիսացող այլ երկրում և սպասում փախստականի կարգավիճակ ստանալու համար ներկայացրած դիմումի կապակցությամբ որոշում ընդունելուն:

Ապատրիդ – ՀՀ կողմից վավերացված՝ 1954 թ. քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիայի համաձայն «ապատրիդն» («քաղաքացիություն չունեցող անձ») այն անձն է, ով որևէ պետության կողմից իր իսկ օրենսդրության հիման վրա չի համարվում քաղաքացի: Քաղաքացիություն չունենալը կարող է բխել տարբեր պատճառներից, օրինակ՝ քաղաքացիության տրամադրմանը վերաբերող օրենքների միջև հակասություններ, պետությունների միջև տարածքների փոխանցում, քաղաքացիությունից զրկում կամ հրաժարում և այլն:

Ապացուցման պարտականություն – կողմի պարտականությունն ապացուցելու վիճարկվող պնդումը կամ մեղադրանքը:

Առանց ուղեկցողի երեխա -18 տարին չլրացած օտարերկրյա

օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, որին չի ուղեկցում նրա մասին հոգ տանող որևէ չափահաս անձ:

Արժանահավատության գնահատում – վիզա կամ ներգաղթային այլ կարգավիճակ ստանալու համար ներկայացվող դիմումի վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում ձեռնարկվող միջոց՝ նպատակ ունենալով որոշելու դիմողի ներկայացրած տեղեկությունների համապատասխանությունն ու վստահելիությունը:

Բացառման պայմաններ (դրույթներ) – դրույթներ, որոնցով մերժվում է միջազգային պաշտպանության տրամադրումն այն անձանց, ովքեր այլապես բավարարում են փախստականի կարգավիճակին ներկայացվող չափորոշիչներին: «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայում բացառման մասին դրույթները կարելի է գտնել 1-ին հոդվածի Դ, Ե և Զ կետերում:

Դադարեցման պայմաններ (դրույթներ) – 1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Գ» մասով սահմանված հանգամանքները (կապված փախստականի անձնական հանգամանքների փոփոխության կամ ծագման երկրում հանգամանքների փոփոխության հետ), որոնց առկայության դեպքում փախստականի կարգավիճակը ենթակա է դադարեցման:

Երրորդ ապահով երկիր – ծագման երկրից և ապաստանի հայցման երկրի բացի այլ երկիր, որտեղ անձի համար չկա կյանքի, ազատության, ինչպես նաև խոշտանգումների կամ դաժան ու անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի հիմնավոր վտանգ, ինչպես նաև չկան օրենքով նախատեսված ներառման պայմաններ, իր ծագման երկիր վերադարձվելու կամ այնպիսի երկիր վտարվելու կամ վերադարձվելու վտանգ, որտեղ առկա են նշված վտանգները:

Ejusdem generis – լատիներենից թարգմանվում է որպես «նույն տեսակի»: Որևէ եզրույթի սահմանման համար օգտագործվող մոտեցում, որի շրջանակներում եզրույթով ամրագրված առարկան ընկալվում է որպես ընդհանուր և կայուն հատկանիշներ ունեցող, որոնք բնածին են կամ, այլապես, փոփոխման ոչ ենթակա: Փախստականների միջազգային իրավունքում այդպես է անվանվում սոցիալական խումբը պաշտպանվող բնութագրերի հիման վրա որոշելու մոտեցումը: Այդ մոտեցման շրջանակներում

սոցիալական խումբ են համարվում այն խմբերը, որոնք ունեն ընդհանուր և կայուն հատկանիշներ, որոնք բնածին են կամ, այլապես, փոփոխման ոչ ենթակա:

Զինված հակամարտություն – միջազգային իրավունքում ճանաչված է զինված հակամարտության երկու տեսակ՝ միջազգային զինված հակամարտություն և ոչ միջազգային բնույթի զինված հակամարտություն: Նշված երկու կատեգորիաների միջև տարբերակումը կարևորվում է այն առումով, որ տարբեր են դրանց նկատմամբ կիրառելի միջազգայնահիրավական նորմերը, և ըստ այդմ որոշ արարքներ պատերազմական հանցագործություն են ճանաչվում միայն եթե կատարված են միջազգային զինված հակամարտության շրջանակներում (օրինակ՝ ռազմագերիների դեմ հանցանքներ, սեփական երկրի դեմ պատերազմին հարկադրելը, սեփական բնակչության վերաբնակեցումը, հակառակորդի քաղաքացիների իրավունքները չեղյալ, կասեցված կամ դատարանում պաշտպանության ոչ ենթակա հայտարարելը, ուխտադրույժ (դավադրական) սպանությունը, հարձակումը, որը լայնածավալ, երկարաժամկետ ու լուրջ վնաս են հասցնում շրջակա միջավայրին): Ընդհանուր առմամբ միջազգային զինված հակամարտություն են ճանաչվում ցանկացած ռազմական գործողություններ երկու կամ ավելի պետությունների միջև: Ոչ միջազգային բնույթի զինված հակամարտություն են ճանաչվում պետական իշխանությունների և ոչ պետական զինված խմբերի միջև, ինչպես նաև այդպիսի զինված խմբերի միջև առկա ծավալուն բռնությունները: Այս առումով ծավալուն բռնության չվերածված ներքին ընդհարումներն ու ընդվզումները չեմ համարվի զինված հակամարտություն:

Ընտանիքից անջատված երեխա – 18 տարին չլրացած օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, ով անջատված է ծնողներից կամ նրա մասին օրենքի կամ սովորույթի հիման վրա հոգ տանողից:

Թեիստական հավատք – թեիզմն ուսմունք է, որի համաձայն Աստվածն անձնավորություն է՝ օժտված կամքով և բանականությամբ, ով ստեղծել է աշխարհը և խորհրդավոր կերպով ներգործում է տիեզերական իրադարձությունների վրա:

Ժամանակավոր տեղավորման կենտրոն – <Փախստականների և ապաստանի մասին> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն. <Կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողները մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելը տեղավորվում են ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում (այսուհետ՝ ամանակավոր տեղավորման կենտրոն), որն այդ նպատակով ստեղծված հատուկ հաստատություն է>:

Իրավակարգը պաշտպանող անձինք - «իրավակարգը պաշտպանող անձինք» տերմինը ներառում է այն բոլոր նշանակված կամ ընտրովի պաշտոնատար անձանց, որոնք, կապված լինելով օրենքի կիրառման հետ, ունեն ոստիկանական, հատկապես իրավախախտներին ձերբակալելու լիազորություններ:

Խոշտանգում – խոշտանգում է ճանաչվում ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում միայն այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից կամ հատուկ են դրանց կամ կապված են դրանց հետ (տե՛ս «Խոշտանգումների և այլ դաժան անմարդկային կամ ն վաստացնող վերաբերմունքի ու

պատժի դեմ» 1984 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածը): Ըստ որոշ մասնագետների խոշտանգումը միջազգային հանցագործություն է: Ամեն դեպքում, այն մարդու իրավունքների միջազգային իրավունքի լրջագույն խախտում է (տե՛ս «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագրի 7-ին հոդվածը, Ժնևի 1949 թվականի կոնվենցիաները):

Խոցելի խմբեր – մշտապես կամ որոշակի հանգամանքների հետևանքով պաշտպանության կարիք ունեցող անձինք (երեխաներ, փախստականներ, սեռական հանցագործության զոհեր, մարդու թրաֆիկինգի կամ շահագործման զոհեր, ընտանեկան բռնության զոհեր, հաշմանդամներ, տարբեր պատճառներով իրենց իրավունքներն ու շահերը ներկայացնելու հնարավորությունից զրկված անձինք և այլն):

Խտրականություն – Մարդու իրավունքների միջազգային իրավունքում խտրականության առավել ընդունված սահմանումը տրվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքի կոմիտեի կողմից 1989 թ. թիվ 18 ընդհանուր

մեկնաբանությունում (General Comment No. 18: 'Non-discrimination', HRI/GEN/1/Rev.4, 1989), ըստ որի խտրականություն է ցանկացած տարբերակումը, բացառումը, սահմանափակումը կամ արտոնությունը, որը հիմնված է որոշակի նույնականացվող հիմքերի վրա, և որի նպատակը կամ արդյունքն է այն, որ վերացվում է կամ վնասվում է բոլոր անձանց ազատությունների կամ իրավունքների ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը հավասար պայմաններով:



Ծագման երկիր – միգրացիոն հոսքերի (կանոնավոր կամ անկանոն) սկզբնաղբյուր հանդիսացող երկիր: Փախստականների միջազգային իրավունքում այս եզրն օգտագործվում է որպես ընդհանուր տերմին՝ փախստականի քաղաքացիության երկիրն ու քաղաքացիություն չունեցող փախստականի մշտական բնակության երկիրը մատնանշելու համար:

ԿԽՄԿ – Կարմիր խաչի միջազգային կոմիտե՝ մարդասիրական կազմակերպություն, որը հիմնադրվել է1863 թվականի հունիսի 24-ին Ժնևում: 1949 թվականի Ժնևյան չորս կոնվենցիաների և 1977 ու 2005 թվականների դրանց լրացուցիչ արձանագրությունների անդամ երկրները ԿԽՄԿ-ին տվել են միջազգային և ներքին զինված հակամարտությունների տուժածների պաշտպանության մանդատ: Այդ տուժածների թվին են պատկանում պատերազմի արդյունքում վիրավորվածները, ռազմագերիները, փախստականները, քաղաքացիական բնակչությունը:

Կոմպլեմենտար պաշտպանություն - մի շարք պետությունների կողմից իրենց օրենսդրությամբ նախատեսած պաշտպանության լրացուցիչ (ի լրումն 1951 թ. Կոնվենցիայով նախատեսվածների) տեսակներ և հիմքեր: Դրանց անվանումներն ու բովանդակությունը տարբերվում են յուրաքանչյուր ներպետական օրենսդրական դաշտում: Հաճախ կոմպլեմենտար պաշտպանությունը ենթադրում է պաշտպանության ավելի ցածր մակարդակ, քան փախստականի կարգավիճակը:

Կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ – ճամփորդական փաստաթղթեր, որոնք, համաձայն 1951 թ. Կոնվենցիայի 28-րդ հոդվածի, ապաստանի երկրի կողմից տրամադրվում են փախստականներին ներպետական անձնագրի փոխարեն: Նման փաստաթղթերն այլ պետությունների կողմից ճանաչվում են որպես վավեր ճամփորդական փաստաթղթեր:

Հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողներ - երեխաներ կամ հաշմանդամություն ունեցող անձինք կամ հղի կանայք կամ միայնակ ծնողներ, որոնք ունեն անչափահաս երեխաներ կամ ծանր հիվանդությամբ տառապող հիվանդներ կամ հոգեկան խանգարում ունեցող անձինք կամ թրաֆիքինգի կամ խոշտանգումների կամ բռնաբարության կամ բռնության այլ ձևերի զոհեր:

Հարցազրույց – անձին հարցեր տալու կամ նրա հետ զրուցելու գործընթաց, որն իրականացվում է անձի մասին տեղեկություններ ստանալու կամ անձնական որակները որոշելու համար:

1949 թ. Ժնևի կոնվենցիաներ – միջազգային մարդասիրական իրավունքի հիմքը հանդիսացող թվով չորս

կոնվենցիաներ, որոնք սահմանում են պատերազմից անձանց պաշտպանության հիմնական սկզբունքներն ու կանոնները: Կոնվենցիաները վավերացրել են 180-ից ավելի պետություններ: Առաջին երկու կոնվենցիաները գործող բանակում վիրավորների և հիվանդների, վիրավոր և հիվանդացած ծովայինների, ինչպես նաև նավաբեկյալների վիճակը բարելավելու, երրորդը՝ ռազմագերիների հետ վարվելու կանոնների, չորրորդը՝ պատերազմի ժամանակ խաղաղ բնակչության և նրանց իրավունքների պաշտպանության մասին են: Ըստ Ժնևյան կոնվենցիաների՝ մասնակից պետությունները պարտավորվում են հետապնդել և պատասխանատվության ենթարկել կոնվենցիաների դրույթները խախտողներին: Այդ դրույթները պարտադիր են նաև չեզոք պետությունների համար:

1977 թ. Արձանագրություններ – 1977 թվականի ընդունվել են Ժնևյան կոնվենցիաների երկու լրացուցիչ արձանագրությունները՝ «Միջազգային զինված հակամարտություններից տուժածների պաշտպանության մասին» (Առաջին արձանագրություն) և «Ոչ միջազգային բնույթի հակամարտություններից տուժածների

պաշտպանության մասին» (Երկրորդ արձանագրություն): Առաջին լրացուցիչ արձանագրությունն ընդլայնել է ժնևյան կոնվենցիաների կիրառման ոլորտը՝ հակամարտող կողմերի թվում մատնանշելով նաև իրենց ինքնորոշման իրավունքի համար պայքարող ժողովուրդներին:

Հետապնդումների հիմնավորված երկյուղ – անձին փախստականի կարգավիճակ տրամադրելու ներառման կումուլյատիվ պայմաններից մեկը, որը բաղկացած է սուբյեկտիվ («երկյուղ») և օբյեկտիվ («հիմնավորված» և «հետապնդումներ») տարրերից, որոնք պետք է դիտարկվեն իրենց համակցության մեջ:

ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարան – ՄԱԿ-ի հիմնական դատական մարմինն է, որը հիմնադրվել է 1945թ.-ի հունիսին և սկսել է գործել 1946թ.-ի ապրիլից: Դատարանը կազմված է 15 անկախ դատավորներից:

Միջազգային դատարանը ստեղծված է միջազգային վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու և օրինականությունը ապահովելու համար: Դատարանն իրավազոր է քննության առնել պետությունների միջև վեճեր, երբ առկա է վեճի կողմերի համաձայնությունն առ դատարանում վեճի քննություն: Որոշ միջազգային պայմանագրեր (օրինակ՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1965 թ. կոնվենցիան, Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին 1948 թ. կոնվենցիան) նման համաձայնություն են նախատեսում դրանցից բխող բոլոր վեճերի համար:

ՄԱԿ-ի նպատակներ – Միավորված ազգերի կազմակերպության նպատակները սահմանված են ՄԱԿ-ի Կանոնադրության 1-ին հոդվածով և ներառում են միջազգային խաղաղության ու անվտանգության ապահովումը, վեճերի խաղաղ լուծման ապահովումը, ազգերի բարեկամական հարաբերությունների զարգացումը՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքի վրա, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ մարդասիրական բնույթի միջազգային խնդիրների լուծմանը, ինչպես նաև բոլորի

համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի տարածմանը և քաջալերմանը ուղղված միջազգային համագործակցություն իրականացումը:

ՄԱԿ-ի սկզբունքներ – Միավորված ազգերի կազմակերպության նպատակները սահմանված են ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածով և ներառում են պետությունների ինքնիշխան հավասարության, միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման, վեճերի խաղաղ կարգավորման, ուժի գործադրման կամ դրա սպառնալիքի արգելման, ՄԱԿ-ի գործողություններին օժանդակության, ներքին գործերին չմիջամտելու սկզբունքները:

Մասնավոր անձ կամ խումբ – միջազգային իրավունքում մասնավոր անձ կամ անձանց խումբ են համարվում բոլոր անձինք ու խմբերը, որոնք պետական պաշտոնյա կամ մարմին չեն (տե՛ս «պետական մարմին»): Սակայն որոշ դեպքերում մասնավոր անձանց կամ խմբերի արարքները վերագրվում են պետությանը: Նման դեպքերում, այդ թվում՝ փախստականների միջազգային իրավունքի իմաստով,

նրանց այդպիսի արարքները կհամարվեն պետության արարքներ: Մասնավորապես, վերագրելիությունը առաջանում է այն դեպքերում, երբ պետությունն ուղղորդում է կամ արդյունավետ կերպով վերահսկում է մասնավոր անձանց արարքները կամ դրանք ճանաչում է իբրև իրենը կամ նման անձանց օժտում է իշխանական լիազորություններով և այլ դեպքերում (դրանք առավել մանրամասն ներկայացված են ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի կողմից մշակված ու Գերագույն Վեհաժողովի կողմից թիվ 56/83 բանաձևով հաստատված՝ պետությունների պատասխանատվության մասին հոդվածների նախագծում ու դրա մեկնաբանություններում):

Մարդկության դեմ հանցագործություն – «Մարդկության դեմ հանցագործություն» եզրն առաջին անգամ կիրառվել է Մեծ Եղեռնի առնչությամբ, սակայն հետագայում ցեղասպանությունն առանձնացվել է որպես առանձին հանցատեսակ: Մարդկության դեմ հանցագործությունը միջազգային հանցագործության տեսակ է, որը կարող է կատարվել ինչպես խաղաղ ժամանակ, այնպես էլ ռազմական գործողությունների շրջանակում, և դրսևորվում է քաղաքացիական բնակչության դեմ ուղղված լայնածավալ

կամ կանոնավոր դիտավորյալ հարձակման միջոցով: Հարձակումը կարող է ներառել այնպիսի արարքներ, ինչպես սպանությունը, բնաջնջումը, ստրկացումը, վտարումը կամ բռնի տեղահանումը, ազատությունից զրկումը, խոշտանգումը, բռնաբարությունը, սեռական ստրկությունը, մարմնավաճառությամբ զբաղվելուն հարկադրելը, հարկադիր հղիությունը, հարկադիր ամլացումը, խմբի հետապնդումը քաղաքական, ռասայական, ազգային, էթնիկական, մշակութային, կրոնական, գենդերային կամ այլ անիրավաչափ հիմքերով, մարդկանց բռնի անհետացումը, ապարտեիդը, մեծ տառապանք, մարմնական լուրջ վնասվածքներ պատճառող կամ հոգեկան կամ ֆիզիկական առողջությունը վնասող նմանօրինակ այլ անմարդկային միտումնավոր արարքները (տե՛ս Միջազգային քրեական դատարանի 1998 թ. կանոնադրության 6-րդ հոդվածը):

Մարդու իրավունքների կոմիտե – քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրի հիման վրա ստեղծված միջազգային կառույց, որին Կոնվենցիայով վերապահված է մասնակից պետությունների ներկայացրած ազգային զեկույցների և որևէ մասնակից պետության տարածքում դաշնագրի դրույթները խախտելու վերաբերյալ ներկայացրած հաղորդումների քննության իրավասությունը:

Միասնական դիմում – սեփական անձին, ինչպես նաև համատեղ բնակվող և փախստականի քաղաքացիությունից տարբերվող արդյունավետ պաշտպանություն տրամադրող որևէ այլ պետության քաղաքացիություն չունեցող բարեկամներին (ընտանիքի անդամներին) Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ միգրացիայի հարցերով լիազոր մարմնին ուղղված գրավոր խնդրանք:

Միգրանտ – Միջազգային մակարդակով «միգրանտ» տերմինի համար համընդհանուր ճանաչում գտած որեւէ սահմանում չկա: «Միգրանտ» տերմինը սովորաբար ներառում էր բոլոր այն դեպքերը, երբ անձն ազատորեն կայացնում էր միգրացիայի դիմելու իր որոշումը՝ ելնելով «սեփական հարմարավետությունից» և առանց արտաքին ճնշող գործոնի միջամտության. հետեւաբար, դա վերաբերում էր այն անձանց և ընտանիքի անդամներին, որոնք տեղաշարժվում էին այլ երկիր կամ տարածաշրջան՝ իրենց նյութական կամ սոցիալական պայմանները բարելավելու և իրենց կամ իրենց ընտանիքի համար առավել բարենպաստ հեռանկարներ ստեղծելու համար:Միավորված ազգերի կազմակերպության կողմից միգրանտը սահմանվում է որպես անձ, որը ավելի քան մեկ տարի բնակվել է օտարերկրյա պետությունում՝ անկախ պատճառներից, կամավոր թե ոչ կամավոր, և անկախ միգրացիայի դիմելու համար օգտագործված միջոցներից՝ կանոնավոր, թե անկանոն: Այդ սահմանման համաձայն՝ ավելի կարճ ժամանակահատվածով ճանապարհորդող անձինք՝ զբոսաշրջիկները և գործարարները, չեն համարվում միգրանտներ: Այնուամենայնիվ, այս տերմինի լայն գործածումը ներառում՝ առավել կարճաժամկետ

միգրանտների տեսակներ, ինչպես օրինակ՝ սեզոնային գյուղատնտեսական աշխատողներ, ովքեր ճանապարհորդում են կարճ ժամանակահատվածով՝ գյուղատնտեսական կուլտուրաների մշակմամբ կամ բերքահավաքով զբաղվելու համար:

Միգրացիա – անձի կամ անձանց խմբի տեղաշարժը միջազգային սահման հատելու միջոցով կամ պետության ներսում: Դա բնակչության տեղաշարժ է, որը ենթադրում է մարդկանց ցանկացած տեսակի տեղաշարժ՝ անկախ դրա տևողությունից և պատճառներից: Այն ներառում է փախստականների, տեղահանված անձանց, տնտեսական միգրանտների և այլ նպատակներով տեղաշարժվող անձանց միգրացիան:

Միջազգային բնույթի հանցագործություն (կոնվենցիոն հանցագործություն) – հանցանքներ, որոնց քրեականացումը նախատեսված է միջազգային պայմանագրերով: Դրանք անմիջապես չեն քրեականացվում միջազգային իրավունքով, այլ ենթակա են քրեականացման ազգային օրենսդրության մակարդակով: Որպես կանոն, դրանք այնպիսի արարքներ են, որոնք սպառնում են միջազգային հանրության շահերին: Նման հանցագործությունների օրինակ են թմրամիջոցների և մարդկանց թրաֆիքինգը, ծովահենությունը, առանձին ահաբեկչական գործողությունները և այլն:

Միջազգային հանցագործություն – առավել լուրջ հանցագործություն, որը քրեականացվում է անմիջապես միջազգային իրավունքի նորմերով՝ անկախ ներպետական իրավունքում դրա քրեականացումից, ինչպես նաև կարող է

անմիջապես ընդդատյա լինել միջազգային քրեական դատարանին կամ տրիբունալներին: Ներկայումս որպես միջազգային հանցագործություն անվերապահորեն ճանաչված են ռազմական հանցագործությունները, մարդկության դեմ հանցագործությունները, ցեղասպանությունը և ագրեսիան:

Միջազգային մարմիններ- 1951թ. Կոնվենցիայի 25-րդ հոդվածի իմաստով որպես միջազգային մարմին հիմնականում հասկացվում է ՄԱԿ ՓԳՀ-ն: Այդուհանդերձ, 25-րդ հոդվածի շրջանակներում պետությունը կարող է դիմել նաև այլ միջազգային կազմակերպությունների օգնությանը:

Միջազգային պաշտպանության իրավունք ունեցող այլ անձ - այն անձն է, ով ֆորմալ առումով փախստական չէ, բայց ում փաստացի վիճակը և խնդիրները գրեթե նույնական են փախստականների վիճակին ու խնդիրներին (օրինակ՝ Սիրիայից Հայաստան տեղափոխված անձինք, ովքեր չեն կարող հավակնել փախստականի կարգավիճակի, քանի որ ստացել են ՀՀ քաղաքացիություն): Նման դեպքերում ՄԱԿ ՓԳՀ-ն, որպես կանոն, աջակցում է նաև նման անձանց խնդիրների (առավելապես տնտեսական և սոցիալական բնույթի) լուծմանը:

Մտահոգության առարկա հանդիսացող անձ – հավաքական տերմին, որն օգտագործվում է մատնանշելու այն անձանց խմբերը, ում խնդիրներով իր մանդատի

շրջանակներում զբաղվում է ՄԱԿ ՓԳՀ-ն: Այն, մասնավորապես, ներառում է փախստականներին, ներքին տեղահանված անձանցք, վերադարձող անձանց, ապատրիդներին ու միջազգային պաշտպանության իրավունք ունեցող այլ անձանց:

Նանսենի անձնագիր – միջազգային փաստաթուղթ, որը հավաստում էր դրա իրավատիրոջ ինքնությունը: Առաջին անգամ տրվել է Ազգերի Լիգայի կողմից քաղաքացիություն չունեցող փախստականներին՝ մեծամասամբ ռուս ու հայ փախստականներին: Այդ փաստաթուղթը տրվում էր երկու պարտադիր պայմանների դեպքում 1. անձի ինքնությունը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում, 2. փաստաթղթի առկայության դեպքում, որը հավաստում էր, որ անձը հանդիսանում է ներգաղթած:

Ներառման պայմաններ (դրույթներ) – փախստականի կարգավիճակի տրամադրման համար անհրաժեշտ պայմաններ՝ սահմանված 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայով:

Ներքին տեղահանված անձ – այն անձինք կամ անձանց

խմբերը, որոնք մասնավորապես զինված ընդհարումների, համատարած բռնության իրավիճակների, մարդու իրավունքների խախտումների կամ բնական կամ մարդածին աղետների պատճառով կամ դրանց հետևանքներից խուսափելու համար հարկադրված կամ պարտավորված փախչել են՝ լքելով իրենց տները կամ մշտական բնակության վայրերը և որոնք չեն հատել միջազգայնորեն ճանաչված որևէ պետական սահման:

Ներքին տեղափոխման այլընտրանք – իրավիճակ, երբ հետապնդումների ենթարկվող անձն իր իսկ բնակության երկրում հնարավորություն ունի իր բնակության տարածքից դուրս այլ տարածքում գտնել անվտանգ ապաստան: Նման հնարավորությունը պետք է լինի իրական ու ողջամիտ:

Nullum crimen sine lege = Nulum crimen, nulla poena sine lege - Չկա հանցագործություն, չկա պատիժ, եթե այն նախատեսված չէ օրենքով:

«Չփարատված կասկածներն ի օգուտ հայցողի մեկնաբանելու» սկզբունք – ապաստան հայցողի կողմից նշված արժանահավատ, սակայն առարկայական ապացույցներով չհաստատված փաստերը հաստատված համարելուն ուղղված վարչարարություն:

Չքաղաքացի – լայն իմաստով «չքաղաքացի» կարելի է համարել ցանկացած ապատրիդի: Սակայն, որպես կանոն, այս տերմինն օգտագործվում է նեղ իմաստով՝ մերձբալթյան երկրներում (հատկապես՝ Լատվիայում) այն անձանց նկարագրելու համար, ովքեր ունեն «չքաղաքացու» անձնագրեր:

Պատերազմական հանցագործություն – պատերազմական հանցագործությունները միջազգային հանցագործության տեսակ են, որոնք կարող են իրականացվել զինված հակամարտության համատեքստում: Պատերազմական հանցագործություններ են համարվում, մասնավորապես, պատերազմի օրենքների կամ սովորույթների լուրջ

խախտումները: Այդ հանցագործությունների թվին առանց սահմանափակման պատկանում են Ժնևի 1949 թ. կոնվենցիաների դրույթների լուրջ խախտումները՝ ներառյալ կանխամտածված սպանությունը, խոշտանգումը, անմարդկային վերաբերմունքը, ռազմական գործողություններին այլևս չմասնակցող անձանց ապօրինի կալանքը կամ վտարումը, ինչպես նաև Ժնևի 1949 թ. չորս կոնվենցիայով պաշտպանվող ունեցվածքի ոչնչացումը ու յուրացումը: Պատերազմական հանցագործություններ կարող են կատարվել քաղաքացիական կամ ռազմական անձնակազմերի կողմից: Մանրամասների համար տե՛ս Միջազգային քրեական դատարանի 1998 թ. կանոնադրության 8-րդ հոդվածը:

Պատժամիջոցներ – համաձայն 1951թ. Կոնվենցիա travaux préparatoires-ների՝ 31-րդ հոդվածում օգտագործվող այս եզրը ներառում է ինչպես քրեական, այնպես էլ վարչական պատասխանատվության միջոցները: Սակայն այն չի վերաբերում անձի ձերբակալությանը (օրինակ՝ ճշտելու համար, արդյո՞ք մուտքն ուղղակիորեն եղել է հետապնդումների երկրի տարածքից և անօրինական է հիմնավոր պատճառով)՝ ողջամիտ ժամկետում

ձերբակալության օրինականությունը իրավասու դատարանի քննությանը ներկայացնելու պայմանով:

Պետական մարմին – ցանկացած կառույց կամ պաշտոնյա, ով ներպետական իրավունքի համաձայն դե ֆակտո տվյալ պետության հանրային իշխանության (այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մակարդակում) մարմին կամ պաշտոնատար անձ է, միջազգային իրավունքի իմաստով կհամարվի տվյալ պետության մարմին կամ պաշտոնյա: Որևէ նշանակություն չունի, թե արդյոք տվյալ մարմինը կամ պաշտոնյան իշխանության որ ճյուղն է ներկայացնում, ինչ տեղ կամ պաշտոն է գրավում պետական իշխանության համակարգում, հանրային կառավարման որ մակարդակում է գործում (դաշնային, տարածքային, համայնքային և այլն): Նշանակություն չունի նաև այն, թե արդյոք ներպետական իրավունքը խնդրո առարկա կառույցին կամ պաշտոնյային հստակ որակում է որպես պետական մարմին կամ պաշտոնյա՝ քանի դեռ նրան փաստացի տրված է համապատասխան կարգավիճակ և հանրային իշխանության որոշակի գործառույթ (օրինակ՝ ՀՀ կենտրոնական բանկը միջազգային իրավունքի համաձայն ճանաչվում է ՀՀ պետական մարմին, քանի որ ՀՀ օրենսդրությամբ հանդիսանում է «պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձ»):

Ռասայական խտրականության վերացման կոմիտե – ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1965թ. կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով հիմնադրված միջազգային կառույց: Կոմիտեն իրավունք ունի Կոնվենցիայի մասնակից պետություններից ստանալու և քննության առնելու պարբերական զեկույցներ այդ փաստաթղթի կատարման ընթացքի մասին, կարող է քննության առնել մի մասնակից պետության հաղորդումը մյուս մասնակից պետության կողմից Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները չկատարելու վերաբերյալ՝ պայմանով, որ պետությունը, որի վերաբերյալ ներկայացվում է հաղորդումը, ճանաչում է Կոմիտեի այդ իրավասությունը:

Ռեպատրիացիա – հայրենադարձություն: Գերիների, փախստականների և այլ անձանց վերադարձը հայրենիք:

«Sur place» փախստական – այն անձն է, ով փախստական է դառնում «տեղում»՝ այցելության երկրում: Օրինակ՝ անձն ի սկզբանե կարող է իր երկրից դուրս մեկնել առանց այնտեղ վերադառնալու երկյուղի և առանց փախստական դառնալու մտադրության: Եթե այդուհետ (իր բացակայության ընթացքում) իր ծագման երկրում տեղի ունեցած զարգացումների (օրինակ՝ իր սոցիալական կամ ազգային խմբի դեմ հետապնդումները) ուժով նրա մոտ առաջանում է համապատասխան երկյուղ, նա կարող է ճանաչվել փախստական:

Վերաբնակեցում – մարդկանց (փախստականների, ներքին տեղահանված անձանց և այլն) տեղափոխումը սովորաբար երրորդ երկրում գտնվող այլ աշխարհագրական տարածք և միջավայր, ինչպես նաև նրանց ինտեգրումը տվյալ տարածքում և միջավայրում: Փախստականների պարագայում վերաբնակեցումը նրանց փոխանցումն է մի երկրից (որտեղ նրանք ապաստան են փնտրել) մեկ այլ

պետություն, որը համաձայնվել է ընդունել նրանց: Փախստականներին այդպիսի երկրում սովորաբար տրամադրվում է ապաստան կամ որևէ այլ տեսակի երկարաժամկետ կացության իրավունք և, շատ դեպքերում, նրանք ունեն քաղաքացիություն ստանալու հնարավորություն:

Վերադարձ («refoulement») – փախստականին կամ ապաստան հայցողին հարկադրաբար վերադարձնելն է իր ծագման կամ այլ երկիր, որտեղ նա, հավանական է, կենթարկվի հետապնդումների:

Վերադարձող անձ – փախստականների միջազգային իրավունքի շրջանակներում՝ փախստական, ով կամավոր ռեպատրիացիայի է դիմում՝ վերադառնալով իր ծագման երկիր: Նման գործողության ուժով նա կորցնում է փախստականի կարգավիճակը, սակայն ՄԱԿ ՓԳՀ համար շարունակում է մնալ մտահոգության առարկա հանդիսացող անձ, քանի որ վերադարձը համապատասխան փախստականի հիմնախնդիրների երկարատև լուծման մաս է:

Վտարում – պետության գործողություն, որը կատարվում է

քաղաքացի չհանդիսացող անձին այդ պետության տարածքից դեպի նրա ծագման երկիր կամ երրորդ երկիր հեռացնելով՝ այդ երկրում ընդունելը մերժելուց կամ մնալու թույլտվությունը դադարեցնելուց հետո:

Տնտեսական միգրանտ (economic migrant) Անձ, որն իր ծագման երկիրց դուրս բնակության հաստատելու համար լքում է իր սովորաբար բնակվելու վայրը՝ իր կյանքի որակը բարելավելու նպատակով: Այս տերմինը հաճախ մոտավոր իմաստով գործածվում է անձանց տարբերակելու համար այն փախստականներից, որոնք փախուստի են դիմում հետապնդումից խուսափելու համար, ինչպես նաև համանմանորեն գործածվում է այն անձանց առնչությամբ, որոնք փորձում են երկիր մուտք գործել առանց օրինական թույլտվության և/կամ ապաստան հայցելու ընթացակարգերի՝ առանց բարեխիղճ հիմքի կիրառման: Տերմինը հավասարապես կարող է կիրառվել նաև այն անձանց նկատմամբ, որոնք իրենց ծառման երկիրը լքում են աշխատանք գտնելու նպատակով:

Travaux préparatoires – ֆրանսերենից թարգմանվում է

որպես «նախապատրաստական աշխատանքներ» (երբեմն կիրառվում է նաև «նախապատրաստական փաստաթղթեր» տարբերակը)։ Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թ. կոնվենցիայի 32-րդ հոդվածը միջազգային պայմանագրերի նախապատրաստական աշխատանքները ճանաչում է որպես միջազգային պայմանագրերի մեկնաբանման լրացուցիչ միջոց։ Նույն կոնվենցիայի 33-րդ հոդվածը սահմանում է միջազգային պայմանագրերի մեկնաբանման առաջնային կանոնը. պայմանագիրը պետք է մեկնաբանվի բարեխղճորեն՝ պայմանագրի հասկացությունների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի լույսի ներքո։ Համատեքստի հետ միաժամանակ հաշվի են առնվում պայմանագրի մեկնաբանման կամ դրա դրույթների կիրառման վերաբերյալ մասնակիցների միջև հետագա ցանկացած համաձայնությունը, պայմանագրի կիրառման հետագա պրակտիկան, ինչպես նաև մասնակիցների հարաբերություններում կիրառվող միջազգային իրավունքի ցանկացած համապատասխան նորմ։

Ցեղասպանություն – Միջազգային հանցագործության թերևս առավել լուրջ տեսակը։ Միջազգային իրավունքում ցեղասպանություն են ճանաչվում ազգային, էթնիկական,

ռասայական կամ կրոնական որևէ խումբ լրիվ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ կատարված այնպիսի գործողությունները, ինչպիսին են, օրինակ, այդ խմբի անդամների սպանությունը, նրանց մարմնական լուրջ վնասվածքներ կամ հոգեկան վնաս պատճառելը, կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են խմբի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը, այդ խմբի շրջանակներում մանկածնությունը կանխելուն միտված միջոցներ ձեռնարկելը, երեխաներին մի խմբից մյուսը հարկադիր տեղափոխելը (տե՛ս «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու կամ պատժելու մասին» 1948 թվականի կոնվենցիայի II հոդվածը, Միջազգային քրեական դատարանի 1998 թ. կանոնադրության 6-րդ հոդվածը):

Ubi jus ibi remedium – այնտեղ որտեղ, որ առկա է իրավունք, այնտեղ պետք է լինի պաշտպանության միջոց:



Փախստական – այն անձը, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից կամ, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ: Այս սահմանումը հիմնված է «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի վրա: Աֆրիկյան միասնության կազմակերպության (ԱՄԿ) 1969 թվականի կոնվենցիայով «փախստական» հասկացությունը սահմանում է որպես ցանկացած անձ, որին հարկադրել են լքել իր երկիրը. «արտաքին ագրեսիայի, օկուպացիայի, օտարերկյա գերիշխանության կամ այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնք լրջորեն խախտում են հասարակական կարգը նրա ծագման կամ քաղաքացիության երկրի մի մասում կամ ամբողջ տարածքում»: Նմանապես, 1984 թվականի Կարթագենի հռչակագրում նշվում է, որ փախստականներ են համարվում նաև այն անձինք, որոնք փախուստի են դիմում իրենց

երկրից, «քանի որ նրանց կյանքին, անվտանգությանը կամ ազատությանը վտանգ է սպառնում համընդհանուր խախտում են հասարակական կարգը նրա ծագման կամ քաղաքացիության երկրի մի մասում կամ ամբողջ տարածքում»: Նմանապես, 1984 թվականի Կարթագենի հռչակագրում նշվում է, որ փախստականներ են համարվում նաև այն անձինք, որոնք փախուստի են դիմում իրենց երկրից, «քանի որ նրանց կյանքին, անվտանգությանը կամ ազատությանը վտանգ է սպառնում համընդհանուր բռնության, օտարերկյա ագրեսիայի, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ այնպիսի հանգամանքների պատճառով, որոնցով լրջորեն խախտվել է հասարակական կարգը»:

Փախստականների միջազգային իրավունք – միջազգային իրավունքի ինքնուրույն ճյուղ, որը լայն իմաստով մարդու իրավունքների միջազգային իրավունքի մաս է: Ժամանակակից փախստականների միջազգային իրավունքը ձևավորվել է 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի և դրա 1967 թվականի արձանագրության դրույթների հիման վրա:

Փախստականների չվերադարձելիության սկզբունք (non-refoulement) – փախստականների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկն է, որը պետություններին արգելում է փախստականներին որևէ կերպ վերադարձնել այն պետություններ կամ տարածքներ, որտեղ նրանց կյանքին կամ ազատությանը կարող է սպառնալ վտանգ: Այս սկզբունքը միջազգային սովորութային իրավունքի բաղկացուցիչ մասն է և այդ իսկ պատճառով պարտադիր է բոլոր պետությունների համար՝ անկախ վերջիններիս կողմից 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի վավերացումից: Այս սկզբունքի առաջին հիմքը դրվեց Փախստականների միջազգային կարգավիճակի մասին 1933 թ. Կոնվենցիայով, որը սահմանեց փախստականներին վտարելու արգելքը և ծագման երկրից նրանց մուտքը թույլատրելու պարտականությունը (որոնք ներկայումս չվերադարձելիության սկզբունքի բաղկացուցիչ մասն են):

Քաղաքացիություն չունեցող անձ – Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն որևէ

պետության քաղաքացիություն չունեցող անձինք համարվում են քաղաքացիություն չունեցող անձինք:

Քաղաքացիության պետության պաշտպանություն – քաղաքացիության պետության պաշտպանությունը նշանակում է այնպիսի կապ պետության ու քաղաքացու միջև, որի շրջանակներում, ի լրումն քաղաքացիության ֆորմալ առկայությանը, պետությունը փաստացի իրականացնում է կամ, ըստ անհրաժեշտության, պատրաստակամ է իրականացնել իր քաղաքացու հյուպատոսական պաշտպանություն, կամ այլ կիրառելի եղանակով պաշտպանել նրա իրավունքներն ու օրինական շահերը:

Cautio judicatum solvi – Մի շարք երկրներում կիրառվող դատավարական մեխանիզմ, որի շրջանակներում օտարերկրյա անձի կողմից հայց ներկայացնելու դեպքումդատարանը նրանից պահանջում է դեպոնացնել մի գումար, որը դատարանի գնահատմամբ բավարար կլինի ծածկելու այն ծախսերը, որը նա պարտավոր կլինի վճարել հայցի մերժման դեպքում: